Ասաց․—Բաղտասար, տո՞ւ ես։

Ասաց —Խա՛։ Կընաց ախպօրը արընից քեաշից տիւս, տառմլէօղացրեց, ախպօրը աչկերը պացուաւ․ ասաց․

—Ո՞ւր ա, խենգ փալլվան էլ մնացեր ա։

—Ես էնոնց ըսպանէր էմ, ասաց Բաղտասար։

Սանասարըն տարաւ Գէօհար խանըմի մօտ։ Գէօհար խանըմին առին պերին ինոնց մօր մօտ։

100․ Սանասար ասաց․—Ախպէր, էս Գէօհար խանըմ տո՛ւ առ․ էնի կեալխն[1] էր ծի տեր ըսպանել։

Բաղտասար ասաց․—Չէ՛, ես ինոր չեմ առնի․ էնի էրկու տիր պարև կերե քե։ Տիւ տառնես, կռիւն էլ տիւ էս արե։ Ես կառնեմ էն Թակեաւորի ախչիկ, որը մենք վիշապից ազատեցինք։

101․ Մէրը էրկու տղին փաակեց․ Սանասար մենակ էլաւ էկաւ Արևելից Թակեաւորի մօտ, որ ինոր քեռխէրն էր։

Քեռխէրը եփ տեսաւ ինոր Թոռին, շա՜տ խնտացաւ, ասաց․

—Որտի, դէ առա տեսնեյնք, քեօ մէրը ինչըխ ա, քեօ ախպէր ինչըխ ա․ որ տեղ էր կեացէ, Աջմու Թակեաւոր ինչըխ արաց․ խըտ ծե կռիւ արաց, տիւ ուրիշ տեղ կռիւ խըտ ծե արեր էս։

102․ Սանասար, ինչ որ էնոր կլէօխ էկեր էր, ինոր քեռխօր ասաց մէյ-մէկ։

Քեռխէր Սանասարին ասաց․—Կաց մըտ մե, մենք էլ քլիվերէն խնդանայնք։

Սանասար ինոնց խաթըր չը կոտրեց, մնաց ինոնց մօտ տարիմ։

Տառնայնք Բաղտասարի վերէն։

Դ․

103․ Աջմու Թակեաւորի խաներ խորխուրթ արին, որ ի՞նչ անենք։

Խաներից մէկն ասաց․—Սանասար կեացէ, մնացէ Բաղտասար․ ինոր ըսպանենք։

Մէկն էլ ասաց․—Մենք չընք կենայ ինոր ըսպանի․ ինոր կը կանչենք ըստայ․ էնքան կը խմացնեյնք, կը տանէյնք կը թալեյնք մըջ էնա փոսին․ փուշ, փալաշ ժողվենք վերէն, Թօխ մեռնի։

104․ Կանչեցին Բաղտասարին խարնիս․ ինչքան կընի պըլըն, մարթ չը խմաւ, գըմէն տուին Բաղտասարին։ Բաղտասար սարխօշցաւ, տարան թալին փոսի մէջ, փուշ, փալաշ լցին վրէն։

---

1 Բիչ (ժամանակ) էր մնում։